ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Մարինե Մելիքյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2024թ. հուլիսի 8-ից մինչև հուլիսի 19-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Հարկաբյուջետային կայունություն թեմայով դասընթացին

5. **Քննարկված թեմաները.**

- Ընթացիկ հարկաբյուջետային մարտահրավերների տեսլականը,
- Պետական պարտքի դինամիկան և կապը մակրոտնտեսական շրջանակի հետ,
- Պարտք/ՀՆԱ ցուցանիշի կանխատեսումը
- Պետական պարտքի թիրախին հասնելու համար իրականացվող հարկաբյուջետային ճշգրտումները,
- Պետական պարտքի դինամիկան և ինֆլյացիան,
- Հիմնական սցենարի իրատեսականությունը և ստրես տեստերը,
- Երկարաժամկետ հարկաբյուջետային ճնշումները,
- Համախառն ֆինանսական կարիքի գնահատումը,
- Պետական պարտքի կառավարումը,
- Պարտքի կայունության գնահատման նոր գործիքը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներկա են գտնվել տարածաշրջանի 15 երկրների 29 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի և ՎՄԻ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսությունների շնորհանդեսներ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Կազմակերպիչների կողմից մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնց պարտքի դինամիկայի գնահատման գործիքի միջոցով իրականացվել են թիմային աշխատանքներ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

24 հուլիսի, 2024թ.